ու նաև Ձեր եկեղեցանուէր հասարակական բեղուն գործունէութիւնը Իսթանպուլի հայ համայնքէն ներս, որով Դուք կը հանդիսանաք վերջին տասնամեակներու արևմտահայ կեանքի ստեղծագործ փայլուն մէկ ներկայացուցիչը:

Այդ, գոհունակ սրտով կ'ընդառաջենք Թուրքիոյ հայոց բարեխնամ Պատրիարք Ամենապատիւ Տ. Շնորհք Արքեպիսկոպոս Գալուստեանի միջնորդութեան և այսու Մեր կոնդակով Ձեզի կը հղենք Մեր հայրապետական օրհնութիւնը և կը շնորհենք «ՍՈՒՐԲ ՍԱՀԱԿ-ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ» շքանշանը, մաղթելով որ զայն կրէք Ձեր ազնիւ սրտի վրայ արդար հպարտութեամբ բազում տարիներ, քաջառողջութեամբ, գեղարուեստական նոր իրագործումներով և ընտանեկան երջանկութեամբ:

«Ողջ լերուք զօրացեալ Սուրբ Հոգւով և յաւէտ օրհնեալ ի Տեառնէ և ի Մեծէ». ամէն:

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 21 Հոկտեմբերի
1989 Փրկչական ամի,
և ի տումարիս Հայոց ՌՆԼԸ
ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի:
Հմր. 1647

Տպում ենք պարգևյալ բանաստեղծի հետևյալ բանաստեղծությունները՝ խմբագրության կողմից շնորհավորելով նրան հայրապետական պարգևի առիթով:

ԷՋ
ՄԻ
Ա
ԾԻՆ

ԷՋ —
Իջաւ ա՛յստեղ Աստուածն հայոց հայրաբար
Զարկաւ մուրճը մոխրատեղին ուրկէ ժայթքեց կրակը նոր տեսիլքին
Եղաւ էջքը լոյսին անճառ հոգիներու աչքերէն ներս մինչեւ խորքը սրտերու
Դրաւ քարը առաջին յաւերժական կառոյցին
Բացաւ էջ մը դիւցազնական անկրկնելի պատմութեան
Բերաւ փառքը անհաւասար մարտնչումի-գոյատեւման անհնարին պայքարի
Տուաւ փաստը երկրորդ անգամ վերյառնումի, յարութեան.
Էջ — արութեան:

ՄԻ —
Ի մի Աստուած, ի մի Տէր —
Մի հօտ արդար, մի հովիւ քաջ
Մի — մէկ կեդրոն, բիւր շրջանակ

Մէկ առաջնորդ, միլիոնաւոր հաւատաւոր հպատակ՝
Գլուխն ինչպէս լուսաճաճանչ եւ վարքն անոր հողմաճաճան տարարհակ
Ժողովուրդ մը բազմաբաժան—սակայն մէկ ազգ, մէկ նպատակ.
Ամբողջական ու սուրբ հացի նկանակ
Որ տասնըեօթ դար կերակրեց մեզ շարունակ
Խունկ ու մոմով ու երազով անպարփակ.
Միակ ճամբայ, միակ ամրոց անաւերակ
Մի — ի մի բան:

Ա —
Այբ, առաջինն ամէնուն
Առաջագոյն ամէնէն
Այդ անվախճան, աստղ անստեղծ, ակ անսկիզբ, ափ անառիկ
Արմատանուն աստուածային
Ա — առանցք արարչութեան:

ԾԻՆ —
Ծնունդ եւ ոչ արարած —
Բղխում եւ ո՛չ բռնադատում
Ծիլ՝ այլ երբե՛ք տարատնկում
Այնպէս ինչպէս սերմը կի՛նայ բերրի հողի արգանդին
Ու կը բռնէ նոյնհետայն
Արմատ արիւն ոգի աւիւն սէր ու հաւատք անձնուրաց
Ու կը դառնայ—որդիներուն հարազատ
Լուսացնցուղ օրհնութիւն
Լուսազրահ հանդերձանք
Եւ փրկութեան յոյսի կատար լուսածին —
ԷՋՄԻԱԾԻՆ:

3.6.1983

Առ Նորին Սուրբ Օծութիւն Տէր Տէր ՎԱԶԳԷՆ Ա
Սրբազնագոյն Կաթողիկոսն Ամենայն Հայոց

ՏՆՕՐՀՆԷՔ

Ամէն Զատկի կամ Ծնունդի
Երբ քահանան կուգայ օրհնիլ տուն տնուոր
Մայրս արծաթ ափսէի մէջ կը բերէ
Իր մեծհորմէն —զոր ինքն անգամ չի յիշեր —
Մեզի աւանդ խնկամանը հնօրեայ
Եւ բիւրեղեայ թասի մէջ
Ջուր կամ գինի
Հետն անպայման աղ ու հաց —
սակայն երբե՛ք շերտ մը հաց
կամ քիչ մը աղ պնակով —
Լման հացի երկու ծայրեր—կտրուած